նոյնպէս քարեայ նստարաններ: Աւելի քան հարիւր հոգի կարող էր տեղաւորոիլ այդ նստարանների վրայ: Հարուստ վանքերում այդ տեսակ սեղանները շինուած են լինում մարմարիոնից, իսկ այստեղ շինուած էր հասարակ, մոխրագոյն քարից: Սեղանի գլխում մի առանձին տեղ յատկացրած էր վանահօրը: Մենք նրան իր տեղում նստած գտանք եւ մօտենալով աջը համբուրեցինք: Նա վաղօրօք ծերացած, միջին հասակով մի կրօնաւոր էր, մեղմ աչքերով, հեզ դէմքով եւ նոաղած ձայնով: Ամէն ինչ նրա մէջ մաշոել, թուլացել եւ իր ուժը կորցրել էր, որպէս էր եւ նրա հնամաշ հագուստը: Նա խիստ բարեսրտութեամբ հրաւիրեց Ասլանին նստել իր աջ կողմում, ինձ՝ իր ձախ կողմում, իսկ նաւաստին տեղաւորոեցաւ իմ մօտ: Յետոյ ցաւակցութիւն յայտնեց մեզ հետ պատահած դժբախտութեան մասին եւ գոհութիւն ամենակալին, որ ազատեց մեզ վտանգից: Դրանով վերջացաւ նրա խօսակցութիւնը, որովհետեւ այդ միջոցին, մինը միւսի ետեւից, որպէս գիշերային ուրոականներ, լուռ հանդարտութեամբ ներս մտան աբեղաները եւ կարգով շարոեցան սեղանի երկու կողմում: Աղօթքից յետոյ իւրաքանչիւրը նստեց իր տեղում:

Տիրում էր ընդհանուր լռութիւն: Մենք եւս, սովորական կանոնին հետեւելով, լուռ էինք: Իւրաքանչիւրի առջեւ դրած էր մի կտոր հաց, պատրաստած գարու եւ ցորեանի խառն ալիւրից, մի պղնձէ պնակ, կլայեկով պատած, եւ մի փայտեայ գդալ: Սեղանի այլ պարագայք չկային, բացի փայտեայ մեծ աղամաններից, որ մի-մի հատ դրած էր իւրաքանչիւր հինգ հոգու առջեւ: Կանաչեղէնները առատ էին. դալար սոխ, պռաս, բողկի տերեւներ եւ այլն: Այդ կանաչեղէնները այնպէս ագահութեամբ ուտւում էին, ինչպէս սոված անասունները խոտ են ճարակում: Ոտքի վրայ սպասաւորութիւն էին անում նոյնպէս աբեղաներ: Պղնձեայ մեծ ափսէների մէջ՝ նրանք ներս բերեցին պատրաստած միակ կերակուրը եւ հաւասար կերպով բաժանեցին բոլորին: Մենք եւս մեր բաժինը ստացանք: Դա ձաւարից պատրաստած մի տեսակ փլաւ էր, որի վրայ ածել էին փոքր ինչ կտավիատի ձէթ: Չնայելով որ ես շատ քաղցած էի, բայց ուտել չկարողացայ: Հացը անկարելի էր ուտել: Ցորեանի ալիւրի խառնուրդը նրա մէջ ամենափոքր մասն էր միայն կազմում, իսկ գարին իր խոշոր թեփուկներով խեղդելու չափ անկլանելի էր: Արեւելքում այս տեսակ հացեր պատրաստում են ուղտերի համար: Նաւաստին մեծ ախորժակով ուտում էր: Սեղանի վրայ ուրիշ ըմպելիք չկար, բացի ջրից, եւ ուրիշ համեմ չկար, բացի աղից: Բոլորը ուտում էին մի առանձին ծուլութեամբ, ոչ թէ այն պատճառով, որ սեղանը նրանց համար բաւարար չէր, այլ, ընդհակառակը, շատ ճոխ էր: Ձաւարի փլաւը, կտավիատի ձէթով, ամբողջ տարոայ մէջ գուցէ մի երկու կամ երեք անգամ նրանք բախտ կունենային